

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պարմական գիությունների դոկտոր

**ՆՇՄԱՐՆԵՐ ԴԱՎԻԹ ԿՅՈՒՐՈՊԱՂԱՏԻ ԵՒ
ՏԱՅՔԻ ՆԱՅՈՅ ԲԱՐԲԱՌԻ ՄԱՍԻՆ**

Տարիներ առաջ Արիստակես Լասպիվերպցու Պարմության վրացերեն թարգմանությունը գրախոսելու առիթով նշել էի¹, որ Դավիթ Կյուրոպաղապին վերաբերող հայկական աղբյուրների վկայություններին պետք է ավելացնել «Էջմիածին» հանդեսում Մաշտոցի անվան Մալեմադարանի N 7739 Ավեմարանի հիշատակարանի նոր վերծանությունը, որ կապարել էր հանգուցյալ ձեռագրագետ Արաբաշե Մաթետյանը²։ Վկայակոչելով Սանասարյան վարժարանի երբեմնի այս ձեռագրի հիշատակարանի Ն. Աճառյանի, Ն. Տաշյանի ու Գ. Նովսեփյանի վերծանության փորձերը եւ արդարացիորեն պատառիկային նկատելով այդպիսիք, ես առաջարկում է գրչության հետքերով ու օժանդակ աղբյուրներով հիմնավորվող լրացումներ, որոնք ի վերջո փաստորեն վերականգնում են գրչության ժամանակին վերաբերող հիմնական հիշատակարանը։ Տարիներ անց ձեռագրագետն այդ հիշատակարանը մոտեց իր կազմած «Տալերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե.-ԺԲ. դարեր» ժողովածու (Երևան, 1988, էջ 77), իր նախորդ հրապարակման մեջ եղած *Կեչրուր* գյուղի փոխարեն գրչության վայրը *Արդրու քաղաք* սրբագրելով։

Քանի որ Դավիթ Կյուրոպաղապի անձնավորությունն ու նրա վարած քաղաքական-մշակութային ու դավանական գործունեությունը շարունակում է հայ-վրաց-բյուզանդական խնդիրների շարքում կարեւոր պեղ զբաղեցնել ու բազում պարակարծություններ երևան բերել³, անհրաժեշտ ենք նկատում մասնագիտական գրականության մեջ ուշադրության չառնված նորությունները այսպեղ ի մի բերել եւ ի նորո հրապարակել։

1. Սանասարյան վարժարանի Ավեմարանի (այժմ՝ Մարդրն, 7739) գլխավոր հիշատակարանը.

«[Շնորհաւք եւ [ան]սպառ ողորմութեամբն Քրիստոսի կարարեցի չորբք[վ]րակեան բազմայրերել - - - աշխարհայ - - - մը գ Աւեմար[րանս ձեռամբ անարժայն քահանայի - - - [ի] ՆԾ. (1001) թուականութեա]նս Տա-

1 Грузинский перевод “Повествования” Аристакеса Ластиверци.- Вестник общ. наук, 1975, 2, стр.108-112.

2 Ա.Ս. Մաթետյան, Մի ձեռագիր Ավեմարանի հիշատակարանի նոր վերծանություն.- «Էջմիածին», 1966, ԺԱ-ԺԲ, էջ 205-209:

3 Նկարի ունենք հետեւյալ հրապարակությունները Ն.Մ. Ճանաչեան, Դավիթ Կյուրոպաղապ.- «Բազմավէպ», 1971, թ. 1-2, էջ 47-59, թ. 3-4, էջ 195-213: Լույս է տեսել նաեւ առանձին, Վենետիկ, 1972, 83 էջ: Նիկողայոս Աղոնց, Դավիթ Կյուրոպաղապ.- ՊԲՆ, 2002, թ. 3 (161), էջ 3-37: Վերջին տարիներին Դավիթ Կյուրոպաղապին նվիրված ընդարձակ վրացերեն հոդվածով հանդես եկավ արեւելագետ Մանանա Գաբաշվիլին (տե՛ս Թ. Գամախուրդիայի հիշատակին նվիրված ժողովածու, Թբ., 2007, էջ 117-149): Դավթին վերաբերող դիտարկումներ ունի նաեւ Է. Ֆազարեիշվիլին («Մոռվալթալի», XX, Թբ., 2003):

յոց, ի հալյրապեկտուրեանն՝ րեառն [Մարգլսի Նայոց Կաթողիկոսի, ի] թագաւորութեանն Դաւթի Վրաց [Կիրոյ]պաղ(ա)րի բարեկաշար թալգաւորի ի [գաւաթիս Բա]սենոյ, ի քաղաքս որ կ'ոչի Արդրու]: Արդ, ո՛վ քրիստոսապսակեալ քահանայք, որք ընթ[եռ]նոյք եւ լու[սա]ւորիք ի սուրբ պապութիւնէս, աղաչեմ գամենիսն յիշեսջիք զի[ս]՝ գրագմամեղս եւ գանարժանս, որ թէպէտ եւ մանուկ եմ, բայց ծերա[ց]եալ եմ ի մեղաց, ի մարտիւր եւ յարժանաւոր աղալթս ձեր, թ[ե]ր[ե]ւս ողորմեսցի Քրիստոս յիւր գալստեանն, եւ մերոյ ախմարութեանս եւ անմարթութեանս անմեղադիր լեր - - Տէրս մեր Յիսուս Քրիստոս, ինձա փառք եւ պարիւ յաւիտեան[ն]ս ամեն, ամէն»:

Արձանագրենք, թե այս նույն *Արդրու-Որդու-Դու* քաղաքում է ընդօրինակվել ըստ Օ. Եզանյանի 902 թ., իսկ Ա. Մարթետյանի սրբագրմամբ 1042 թվականի Ավետարանը (Մապեն. N 6384), իր ընդարձակ եւ առաջին մասում հանգավոր հիշատակարանով, որ իր մայր ձեռագիրն է գրել Օ. Եզանյանի կռահման շնորհիվ⁴:

2. Նարկավ, Դավիթ Կյուրոպաղարի հետ պիտի նույնացնել Նաղբարի վանքի գրչապանը հեղինակած հիշատակարանի *Թաւիթ Կորապաղարին*: Ձեռագիրը գրվել է Նայոց ՆՏ. եւ Ը. (999) թվականին *Սիմեոնովն* գրչի ձեռքով «ի հալյրապեկտութեան րեառն Մարգլի Նայոց Կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Սենեքերիմայ որդւոյ Աբուսահլի» եւ հանգամանորեն պարմում է Եփրեմ Ասորու եւ Նովիան Ոսկերբերանի մեկնությունների (Եփրեմ՝ Մեկնութիւն թղթոցն Պօղոսի, եւ Ոսկերբերան՝ Առաքելոց թղթերի մեկնութիւն) համարեղ ընդօրինակման, մայր օրինակներ գրնելու եւ սպուգագրելու պարագաների մասին, որ դպրության պարմության համար ուսանելի շարք պեղեր ունի: Հիշատակարանի վերջըներ մասում կարդում ենք.

«...Այլ յայնմ ժամու եւ ի ձեռն նորա գրեցաւ զիրքս ի ՆՏ. եւ ուր (999) թուականութեանս Նայոց, ի թագաւորութեանն Գագկա որդւոյ Աշոտոյ եւ ի հարմանն Պարսից ի ձեռաց Թաւիթ Կորապաղարի՝ ազնականութեամբ[ը]ն Աստուծոյ: Յայնմ ժամանակի այս զիրք գրեցան աղքատ նիւթով եւ խոշոր, գորս աղաչեմ անմեղադիր լինել անհեղեղ գրոյս եւ աղքատ քարփսիս, այլ գաշխապութիւնս, գոր ընկալայ ի սմա, գայս առ եւ ընկալ եւ ուրախ լեր ի սէր սրբոցս՝ վասն զի թէ քայցես յանօթ այլում ումեք, սորա փոխան ուժգին առցես, զի չէ բաւական գանձք, որք արժեն գոսսա, վասն զի Նոր կտակ կարգեցի այնոցիկ, որք զկնի իմ վայելեն գսա եւ լուսաւորին»⁵:

4 Օ. Եզանյան, Անձնագիրը գրնում է փրոթը.- «Գրական թերթ», 1965, հունվարի 2:

5 Ն. Անտոնով, Մ. Ալիշան, Նայապարում, Վենետիկ, 1901, էջ 311-312: Նաեւ՝ Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանը ձեռագրաց, հայր. Ա. Անթալիաս, 1951, էջ 166-167: «Նայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դարեր» (էջ 75) ընդգրկելիս այս միավորը Արդ. Մարթետյանը վերցրել է Գ. Նովսեփյանի ընթերցումից:

Վենետիկի Մխիթարյաններին պարկանող հնությանը թղթի վրա գրված այս երկրորդ ձեռագիրը գիտությանը հայտնի է Ն.Ղ. Ալիշանի խնամյալ նկարագրությամբ՝ հիշարակարանի նմանահանությամբ հանդերձ:

Ն.Ղ. Ալիշանը «Թալիսի Կորստապաղարի» հիշարակության առիթով հղում է կատարել Ասողիկից քաղված այն պարբերությունը, ուր պարմվում է Դավիթ Կյուրոպաղարի «այր հեզ էլ հանդարտ՝ առաել քան զամենայն թագաւոր, որ ի ժամանակիս յայս» լինելու, «պարճառ խաղաղութեան եւ շինութեան ամենայն արեւելեաց, մանաւանդ Նայոց եւ Վրաց» հանդիսանալու մասին: Այդ նշանակում է, թե *Թալիսի եւ Դաւիթի* նույնացումը կատարել է արդեն նա, բայց չի մասնավորեցրել, թե ինչպես է թվագրում կամ մեկնաբանում «ի հարմանն Պարսից ի ձեռաց Թալիսի» արքահայտությունը⁶: Հիշարակարանի գրիչը հարկավոր նկարի ունի իր գրառումից մեկ փարի առաջ՝ 998 թ. Արեգ ամսին Ապահունյաց Ծումբ (սեռ. Ծմբոյ) գյուղի մերձակայքում (Դեմնասարան լայն դաշտում) Նայոց եւ Վրաց զորքերի՝ Մամլան որդի Աբրիահի զորաբանակի դեմ փարած հաղթանակը, որի մասնակիցների ինքնությունն ու ճակատամարտի հանգամանակի նկարագրությունը փրված է ժամանակակից պարմիչ Սպ. Ասողիկի երկում⁷: Ընդդէմ է «Կիւրոպաղարն Դաւիթ ոչ անձամբ երթայ ի պարտաւում ընդդէմ նորա, զի այր ծեր էր եւ անցեալ զաւուրքք, այլ առաքէ առ արքայն Նայոց Գագիկ եւ առ թագաւորն Վրաց Գուրգէն ... փալ զօրս յօգնականութիւն» (էջ 270), բայց եւ կռվի է ուղարկում իր ողջ զորքը՝ Գաբրիել Ոչոպընփրայ որդու գլխավորությամբ⁸:

3. Նաջորդ ձեռագրական վկայությունը բուն իմաստով հիշարակարան չէ, բայց իր մեջ բովանդակում է հիշարակարանային բնագրից սպասելի որոշ փոփոխություն: Նախաձեռնող հայագետ Ն. Ներսես Ալիսյանը Նոմի Նայոց հյուրանոցի Ս. Վլասում պահվող ձեռագրերը նկարագրելիս (ինքը «ցանկել» բառն է օգտագործում) փաստամյակներ առաջ ուշադրության առավ միջնադարյան գրույցներ եւ «պարմություններ» բովանդակող թ. 33/24 ձեռագիրը, ուր ներկայացված նյութերից (ընդամենը 9 միավոր) երեքը առնչվում էին Դավիթ Կյուրոպաղարի անվանը: Դրանք են.

1. Զրոյց Պղնձէ քաղաքի (3r-15v):
2. Գիր հանհանելուկի կամ Նարցմունք աղջկան ընդ մանկան (33r-40v):
3. Իմաստութիւն մեծ թագաւորին Զարմազանայ եւ որդւոյ նորին Փարմանի Ամմանին վարուցն (48v-65r):

Ն. Ներսես Ալիսյանի հավաստմամբ՝ ձեռագրի վերջից թերթեր ընկած լինելու պարճառով հիշարակարանը չի պահպանվել, ուստի գրչության ժամանակին եւ վայրին վերաբերող փոփոխություններ չկան, բայց «Առաջին հատուածը վերնագիր կը կրէ. «*Զրուց եւ իւստք ստաջի թագաւորացն եւ իշխասացն, զոր թարքմանեցին Դաւիթ Կյուրոպաղարին*»

6 Ն.Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 308: Գրիչը ոչ միայն ժամանակակից է Դավիթին, այլեւ, ինչպես երևում է, գիպե նրա անվան մարմնիկ-ընկալանական շրջանում գործածվող «Թալիսի», իմա «Թալիթ», մերօրյա «Տաթո» կոչական հնչման նախնական «ժողովրդական» փոփոխությունը:

7 «Սպեւիանոսի Տարօնեցոյ Ասողկան Պարմութիւն Տիեզերական», [ի ձեռն Սպ. Մալխասեանց], Ս. Պետերբուրգ, 1885, էջ 269-274: Պարմության այս դրվագը ներկայացված է Իվ. Զավախիշվիլու աշխատության մեջ (փոխ երկերի 12 հատորանոց հրատարակության հ. II, էջ 129-130):

8 «Ոչոպընփիր» անձնական գրության մեջ վարանաբար աղավաղում կա, որի սրբագրությունը կարող է նոր աղբյուրի: Մասամբ նույնը վերաբերում է նաեւ Մեխիթարի/Մեխիտունի Կամրակելքն «գովեալ եղբայր»-ներին, որոնք «գիւնծելն կամ գերիվարն կիսակտոր կործանէին» (էջ 273):

ի հայ լեզու ի տաճիկ լեզվէ»: Այս վերնագիրը կը համարիմ ընդհանուր խորագիր գրույցներու շարքի մը, որոնք կը պարունակեն «առաջի թագաւորացն եւ իշխանացն գրույցքն եւ խօսքն»՝ սահմանուած պարմելու եւ կարդալու»⁹:

Ընդգծված վերնագիրը, ինչպէս իրավացիորեն նկատել է ձեռագիրը նկարագրողը, միանգամայն բավարար եւ հիշատակարանին փոխարինող պարագաներ է հաղորդում: Մասնավորապէս՝

ա) Որ այդ գրույցները թարգմանվել են «ի տաճիկ լեզվէ», իմա արաբերենից, իսկ որ հիշյալ գրույցը («Պղնձէ քաղաք») քաղված է արաբական «Նազար ու մեկ գիշերներ» շարքից՝ բանասիրությունը վաղուց է հայրանի¹⁰: Թե այս փոփոխությունն էլ չունենայինք՝ նրանում առկա օտարաբանությունները մեզ պիտի ուղեկցեին դեպի արաբերեն կամ պարսկերեն բնագիր:

բ) «Զոր թարգմանեցին Դավիթ Կուրուպաղապին» արտահայտությունը իմաստ է առնում՝ եթե նրա փակ հասկանանք Դավթի պարվիրափու լինելը, այլապէս անհասկանալի է այդ նշանավոր գործչի հիշատակությունը: Այս պարագան պարճառաբանված է նրան նախորդող նախադասությամբ. «Զրուց եւ խաւսք առաջի թագաւորացն եւ իշխանացն», այսինքն «թագավորների եւ իշխանների պալատներում պարմելիք կամ լսելիք գրույց», ինչը միջին դարերում ընդունված ու փարածված իրողությունն էր՝ հերոսապատում, էպիքական պատումների, հեքիաթների, հանելուկների ու բարոյախրատական - իմաստասիրական այլ նյութերի շարքին:

գ) Նառկավ իրավացի է Ն.Ն. Ակինյանը, երբ Դավթ Կուրուպաղապի պարվիրափու լինելը բավարար է համարում թարգմանական այս գրույցների երեւան գալու ժամանակը սահմանելու համար. «Նկատմամբ [թարգմանութեան] փարտյն կրնանք վստահաբար ըսել թէ 1000, մարտ 31-էն յառաջ պէտք է թարգմանուած ըլլան, հաւանօրէն ընդ մէջ 950-1000 շրջանի, վասն զի Դավթ Կուրուպաղապ վախճանած է 1000, մարտ 31, զօրիկի օրը, խոր ծերութեան մէջ»¹¹:

դ) Ինչ վերաբերում է թարգմանության վայրին, ապա «Թարգմանիչները, որոնք թարգմանեցին այդ գրույցները արաբերենէ աշխարհաբար հայերէնով, ընտրեցին անշուշտ այնպիսի գաւառական բարբառ մը, որ ընտանի էր Կուրուպաղապին, այսինքն Տայոց նահանգի բարբառով, ուստի իրենք ալ Տայեցի ըլլալու են»¹²:

Ն.Ն. Ակինյանը գոհացել է այս եզրակացությամբ, միաժամանակ նկատել, թե «Չեմ ուզեր այս փեղ անդրագոյն քննութեանց եւ համեմատութեանց մէջ մտնել: Ստորեւ պիտի փամ Զրոյցս ամբողջութեամբ»¹³: Եւ իրոք՝ աշխարհայան 30-48 սյունակները հարկացված են Պղնձէ քաղաքի նորահայտ բնագրի հրատարակությանը, որը եւ «անդրագոյն քննութեան» հնարավորություն է ընձեռում:

9 Ն.Ն. Ակինյան, Զրոյց Պղնձէ քաղաքի.- «Նանդէս ամսօրեայ», 1958, թիւ 1-4, էջ 23:

10 Henri Laurentie, La version arménienne du Ville d'Aïrain.- REArm., I (1921), p. 297-302. Այս գրույցի խմբագրությունների եւ թարգմանությունների մասին փես նաեւ Պ. Մուրադյան, «Պարմութիւն Պղնձէ քաղաքի» գրույցի հայկական եւ վրացական պատումների ու նրանց փոխարաբերության շուրջ.- «Բանբեր Մարտնադարանի», թ. 6 (1962), էջ 249-263: Այս շարքի գրույցների մասին փես նաեւ «Պարմութիւն վասն մանկանն եւ աղջկանն», «Պարմութիւն յաղագս Փախլու թագաւորին», աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, Երեւան, 1983:

11 Ն.Ն. Ակինյան, նշ. աշխ., էջ 23:

12 Անդ, էջ 23-24:

13 Անդ, էջ 27:

Նայոց լեզվի եզերական խոսվածքները թվարկելիս Սյրեփանոս Սյունեցին անվանապես հիշատակում է «զԿորճայն եւ *զՏայեցին* եւ զԽոթայինն եւ զՉորրորդ - Նայեցին եւ *զՍպեքացին* եւ զՍիւնին եւ զԱրցախայինն»¹⁴։ Ուրեմն Տայքի խոսվածքը (այս պարագայում՝ բարբառը) VIII դարում ճանաչված յոթ եզերական հայերեններից մեկն էր, փարբերակվելով նույնիսկ մերձակա Սպեքացիից։

Մինչև Դավիթ Այուրոպադափի պապվերով կապարված այս թարգմանությունների հայրնաբերումը հայոց լեզվի պատմաբանները Տայոց կամ Սպերի հայոց խոսվածքների (բարբառների) մասին միայն հապվածային կռահումներ կարող էին ունենալ՝ հենված մի քանի բառաձևերի ու արտահայտությունների վրա։

Ավելի քան մեկ դար առաջ Նիպոդիպեսի «Մեկնութիւն Երգ երգոցի» վրացերեն թարգմանությունը հրապարակելիս ակադ. Ն. Մառը հանգամանորեն նկարագրեց այդ երկը բովանդակող X դարի նշանավոր «Շապրեբոյան» ճառընփիր-ժողովածուն (973-976 թվականներ), վերծանելով նրանում առկա հայագիր հիշատակագրություններն ու գրչափորձերը¹⁵։ Գիտնականը իրեն հապուկ խորագիրությամբ մաքնացույց արեց այն բոլոր շեղումները, որ ունեին այդ հայերեն գրառումները դասական գրաբարյան ձևերից (Մեսրաբ/Մեսրոպ, արնե/առնե, որինե/արինե, Բերայն/Բերա, ամին/ամեն, ոգնիա/ազնես, Յոսո/Յիսոս, միեր/մեր, երկինս/երկինս, սորփ/սուրբ, եվ/եւ անոն/անուն)։ Ինչպես վիճագրերի վերծանության ժամանակ, այսպեղ եւս Մառը շեղումները շարունակեց կոչել *взлѣгаризм*-ներ, բայց միաժամանակ կռահելով, որ դրանք սոսկ «ժողովրդական» արտասանություններ չեն, այլեւ կենդանի խոսվածքային (բարբառային) վկայություններ - «Նշումների մեջ կան բարբառային գոեհկաբանություններ»¹⁶։

X դարի վերջին քառորդով է թվագրվում նաեւ Տայք-Աղարջքյան նույն միջավայրում սպեղծված մեկ այլ վրացական ձեռագիր՝ նշանավոր հիմներգու Միքայել Ճգնակյացի (Մոդրեկիլի) օրհներգների ժողովածուն (S-425, 978-988 թվականներ)։ Այս ձեռագրում պահպանված 29 հայագիր բառերն ու արտահայտությունները վերծանել, նմանահանությամբ օժտել ու քննության է ենթարկել հայ-վրացական բանասիրության երեւելի ներկայացուցիչ պրոֆ. Ի. Աբովյանը¹⁷։ Գիտնականը հստակորեն խմբավորել ու սահմանել է այսպեղ եղած հայերեն միավորների հնչյունափոխությունները եւ ամփոփել հետեւյալ եզրակացությամբ. «Ինչպես արեանում ենք, հայերեն գրական լեզուն լավ չգիրապեպելու հետեւանքով, 10-րդ դարի վրացերեն ժողովածուի գրիչների հիշատակությունների մեջ նկատվող լեզվական երեւոյթները կրում են բարբառային բնույթ։ Այն հանգամանքը, որ ձեռագրի գրիչները թերավարժ են եղել հայկական դպրության մեջ, մեզ հնարավորություն ընձեռեց բացահայտել իրենց *ժամանակի Տայքի հայերեն կենդանի խոսակցական լեզվի՝ Տայքի բարբառի մի քանի բնորոշ կողմերը*»։

14 Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр.187.

15 «Тексты и разыскания по армяно-грузинской филологии», III, СПб., 1901, стр.XVIII-XX.

16 Անդ, էջ XX:

17 Ի. Աբովյան, 10-րդ դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունները եւ նրանց նշանակությունը հայ բարբառագիտության համար.- «Բանբեր Մաքենադարանի», 3(1958), էջ 35-42: Վերահրապարակված է օ. Նժդեհյան, Յժժժժ, Գ. IV, օձ., 1985, թ. 210-217:

Այս կարգի հիշարարկագրային նյութերի շարքին պիտի դասել վրացերեն մեկ այլ միավորի՝ A-190 պապարակի վրա եղած հայերեն գրությունները¹⁸:

Նրանք եւս ժամանակակից են նախորդ հիշարարկագրություններին, նույն միջավայրից են ու նույն բարբառի հարկանիշներով («ՔՍ ՈՂՈՐՄԷ ՄԵՋ», «ՉԳԻՏԵՄ ԹԷ ՈՐԻ ՎՐԱՅ ԵՆ»): Մանավանդ այս վերջին նախադասությունը կարարյալ աշխարհաբար է:

Թվում է, թե վերոբերյալ բնագրական արձարծումները պիտի բորբոքած լինեին լեզվաբան հայագետների հետաքրքրությունը¹⁹, սակայն նույնիսկ Տայքի բարբառով X դարի վերջին քառորդում գրառված «Պղնձե քաղաքի» բնագրի Ն. Ն. Ալիևյանի ամբողջական հրապարակությունը կազմությունը չփոխեց, թեև միջին հայերենին վերաբերող կարետո հրապարակումներ եղան²⁰:

Ն. Աետոդ վ. Նովմանյանի երկհատոր «Ներագոյութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ» աշխարհայան հրապարակումից անցել է ավելի քան հարյուր փաստերի (1897 թ. Վիեննա) եւ միջին հայերենի մասին լույս են տեսել բազմաթիվ աշխարհայաններ (Կարապ, Անառնյան, Ղարիբյան, Զահուկյան, Ս. Ղազարյան, Մ. Մուրադյան եւ այլք): Նրանք գրեթե բոլորն էլ միջին հայերենի նորմավորման շրջանը կապում են Կիլիկիայի լեզվական կազմության հետ, որ հասարակություն է գտնում այլեւայլ հեղինակների մարենագրական ժառանգությամբ: Սակայն Ն. Աետոդ Այրնյանի հետետողությամբ շարերն են ընդունում, որ միջին հայերենի ուրվագծման շրջանն սկսվում է X դարից եւ արարացում գտնում ինչպես գրական հուշարձաններում, այդպես էլ վիմագրության մեջ: Դավիթ Կյուրապաղարի հանձնարարությամբ կարարված թարգմանական բնագրերը եւ փայեցի վրաց հեղինակների հայափառ համաժամանակյա գրառումները սրուգապես թվագրվող միանգամայն նոր նյութ են ընձեռում հայոց լեզվի պարմության միջին շրջանն ուսումնասիրելու համար: Վրացի հեղինակների գործածած հայերենը նրանց ամենօրյա լսած կենդանի խոսվածքն է՝ Տայքի հայոց բարբառը, որ նրանք X դարի վերջին փասնամյակներին գործածել ու գրառել են, ինչպես եւ գրույցների թարգմանիչները²¹:

Տայքի բարբառին վերաբերող մեր վկայակոչությունները բնավ չեն նշանակում, թե Դավիթ Կյուրապաղարի ժամանակներից ի վեր նրա թագավորության սահմաններ ընդգրկված գրչական կենտրոններում այլեւս գրական հայերենը (գրաբարը) մոռացության էր արվում կամ համարարած փոխարինվում փեղական խոսվածքով: Որ Թ-Ժ դարերից սկսած այսփեղ կազմավորվեցին ու արդյունավոր մարենագրական գործունեություն ծավալեցին Տայքի ու Կղարջքի վրացական վանական կենտրոնները՝ անվերապահորեն սրույց է այդ

18 Նկարագրությունը փես «Քճճ. իջլճ. ճլճճճճճճ», A-I, էջ 327-328:

19 Տողերիս հեղինակը հիշյալ փաստերը վկայակոչել ու լեզվի պարմության մասնագետների ուղարդությանն է առաջարկել «Кавказ и Византия» փարեգրում փրված մասնավոր հողվածում (ԿՌԹ, I, 1979, թՅԲ. 82-97):

20 Նկարի ուներ՝ Նորայր Ն. Բիւզանդացի, Բառգիրք սրորին հայերենի ի մարենագրութեանց ԺԱ-ԺԷ դարոց: Նրափարակութեան պարարասփեց Մարփիրոս Միասեսանը, Ժնեւ, 2000: Ի դեպ, խորագրում պիտի ԺԱ դարի փոխարեն Ժ դար ունենայինք, քանի որ հեղինակը սրորին հայերենի վկայակոչությունն սկսում է այդ դարի բնագրից քողելով (անդ, էջ 4): Ռ.Ս. Ղազարյան, Ն.Մ. Ավեփիյան, Միջին հայերենի բառարան, հապ. Ա, Երեւան, 1987, հապ. Բ, 1992: Այս հրապարակության առաջին հապորում ներկայացված են այն բոլոր սկզբնաղբյուրները, որոնց հիմամբ կազմված է բառարանը (էջ 5-10), ուր ճկան մեր արձարծած բնագրերը:

21 Բարբառիս կապակցությամբ փեն Ն.Ա. Այրնյան, Քննական քերականության աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 137: Ս.Ղ. Ղազարյան, Միջին հայերեն, գիրք առաջին, Երեւան, 1960, էջ 91-114:

Այսպիսով, հայոց լեզուն կենդանի ու խոսակցական էր ոչ միայն Դավիթ Այուրուպա-ղապի որօք, այլև նրանից երկու հարյուր փարի հեջո ես՝ 1211 թվականին, երբ արդեն Խախուն ազգաբազրվել էր Թամարի օրոք ու իբրեւ փիրույթ փրվել «գաւառապետիս մերոյ Թաղային»²⁶:

Ինչ վերաբերում է գավառում գրավող բերդերին, ապա Ն. Սարգիսյանը փեսել ու թվարկել է այդպիսիք. «Ընկուզակայ բերդ, Էշկիճորու բերդ, Քիւջիքսրէրէի բերդ, Աղջկու բերդ, Ղալէ փիպի եւ «այլն եւս»²⁷: Ի վերջո արձանագրենք, որ Խախունի եկեղեցին գրավում էր «ի գիւղն Խախու, իսկ եկեղեցիք եւ մարտունք, նշանատրք եւ աննշանք ոչ սակաւք»²⁸: Թե նրանցից որոնք են եղել սպուգապետ Ս. Ասրվաճաճնին, Ս. Սարգիս Զորավարին նվիրվածները՝ ճշգրտելի է:

Նախնական

ՏԱՅՈՑ ԽՈՍՎԱԾՔԻ (ԲԱՐԲԱՌԻ) ԳՐԱՎՈՐ ՆՇՄԱՐՆԵՐ
Ա. «ՊՂՆԶԷ ՔԱՂԱՔ»

1. Կայր Խալիֆա մի Պաղպար քաղաք, եւ ասէին անուն նորա Ասրու Ազիզ: Ար մի ելաւ ըսպ տովորութեան իւրոյ եւ խաղար ի մոյրանն: Եւ երեկ մարդ մի, եւ ասեն զանուն նորա Դալիֆ, երեկ եւ ծունր էած խալիֆային եւ ասէ. Է՛հզար խալիֆա, քաղաք մի կայ ի հիւսիսոյ դէին, անուն նորա Պղնճէ քաղաք, մաւր ի ան քաղաքն եւ ան դէքն, որ Սողոմոն ի կժերն էած եւ արճիճով զբերան կալաւ եւ մարնեիք:

2. Կոչեց խալիֆան զԱմիր Մուսին եւ ասէ. Եկ գնա՛, գի՛ր զան դէքն, որ Սողոմոն զնդա-նել է:

Ասէ Ամիր Մուսին. Ոչ գիտեմ զճանապարհն եւ ոչ կարդացել եմ գրով:

Ասէ խալիֆան. Նախտր մն կայ քաղաքս. նա գիտէ զճանապարհն, հեպ քեզ առ եւ գնա՛:

Կոչեաց խալիֆան զՆախտրն եւ ասէ. Արեկ գնա՛ հեպ Ամիր Մուսին ի Պղնճէ քաղաքն, զի դու գիտես զճանապարհն:

Ասէ Քո հրամանք է:

3. Ասէ Ամիր Մուսին ընդ Նախտրն. Ի՞նչ պիտի հեպ մեզ ի ճանապարհս:

Ասէ Նախտրն. Պիտի հեպ մեզ հազար ուղր, որ զջուրն փանի, հազար ուղր, որ զապա-րանք փանի, զի պիտի որ ի չորս աշխարհ մտենք. եւ է անջրդի եւ դարպակ ի մարդուէ, ու քառասուն աւուր ճանապար է. սասպիկ հողմն լինի, թէ ի փկերն լնունք ջուր, նայ ցամաքի:

Ասէ Ամիր Մուսին. Ապա ի՞նչ առնուք:

Ասէ Նախտրն. Ա՛ռ ի հեպ մեզ հազար փուկա կուժ, որ ջուրն չցամաքի:

Ասէ Ամիր Մուսին Աղեկ ասցիր:

²⁶ Ինչպես երևում է, «Լաշա-Գեորգիի ժամանակ[ներ]ի մարտանի» քրոնիկոնի 435(=1215) ենթակա է սրբազրության՝ ԹԶԾԵՂԵՐԹՅՈՒՆ - 431=1211.

²⁷ Ն. Ն. Սարգիսյան, նշ. աշխ., էջ 85:

²⁸ Անդ, էջ 85-86:

Եւ խրկեցին ի Մար եւ բերին կժեր շապ: Եւան առաջ եւ առին ի հետ երկու հազար միա-
տը իւրանց ամէն պէտովն եւ գնացին ի ճանապարհ բազում եւ մփին ասեր աշխարք եւ եւան
մփին ի շէն աշխարհք: Եւ ար մի եւ գիշեր ի լեառն եւ ի դաշտ այլ գնացին...

ՆԱ 1958, N 1-4, էջ 30-31

Բ. «ՇԱՏԱԲԵՐԴԻ ԶԵՌԱԳԻՐ»

1. ՄԵՍՐՍԱԲ ԱՐՆԷ ԶԱՅՍ ԳԻՐՍ:
2. Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՐՆԷ ԲԵՐԱՅՆ ԳՐԱԳԻՐՍ: ԱՄԻՆ:
3. ՈԳՆԻԱ ՅՍՈՍ:
4. ՆԱՅՐ ՄԻԵՐ, ՈՐ Ի ԷՐԿԻՆՍ, ՏԷՐ ՍՈՐՓ ԵՎ ԱՆՈՆ:
5. ԻԴ. ա թղթ պկսէ [24[պրակ]. 1 թերթը պակասէ]
6. ԼԹ. միջի օղն է [39[պրակ] միջի օղն (ЗВНО) է]:

Тир А-Гр ФИЛ, III, 1901, с. XVIII-XX

Գ. ՄԻՔԱՅԵԼ ՄՈՒՐԵԿԻԼՈՒ ՕՐՆԵՐԳԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
(ընտրությամբ)

1. Տ(Է)Ր ՈՂՈՐՄԷ ՄԻՔԱՅԵԼԻ, ԱՄԷՆ:
2. ՄԷԾ ՈՂՈՐՄՈՒԹՆ:
3. Ս(ՈՒՐ)Բ ԿԻՈՍ (իմա՛ *կոյս*, სძაღო - նաեւ *հայս*):
4. ԲԱՆ Տ(ԵԱՌՆ) ԱՅ (დთისა სიგეჳათ - ով բան Տեառն):
5. Տ(Է)Ր ՊԱՆԵ Ի ՉԱՐԷ:
6. ԲՐԾԿԻՆՎԱԼԷՍԱ (գրադարձ. პრწყინვალესა-ի):
7. ՆՈՐՈԳԵՅ:
8. ՂՈՒՍԱԴՈՐԷՅ ԶԱՆՁՆ ԶՄԵՐ:
9. Տ(Է)Ր ՈՂՈՐՄԷ ՄԻՔԱՅԵԼԻ:
10. ԶԷԹ ՈՂՈՐՄՈՒԹԷՆ:
11. ՈՂՈՐՄՈՒԹԻՆ:
12. ՄՈՒՍԷՍ:
13. ՅԱՐԵԻ Ք(ՐԻՍՏՈ)Ս:
14. Տ(Է)Ր ՈՂՈՐՄԷԱ:
15. Տ(Է)Ր ՊԱՆԷ Ի ՉԱՐԷ:

16. Տ(Է)Ր ՈՂՈՐՄԷ ՍՏԷՓՆԱ

17. ԽՈՒԷՐՏԱԿԷՑԵՐ:

«Բանբեր-Մապենադարանի», 4(1958), էջ 36:
Նմմր. «Кавказ и Византия», 1(1979), էջ. 82-84.

Դ. ՆԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՅԵՐԵՆ ՊԱՏԱՌԻԿԻ ՎՐԱ

1. Ք(ՐԻՍՏՈ)Ս ՈՂՈՐՄԷ ՄԵԶ
2. ՉԳԻՏԵՄ ԹԷ ՈՐԻ ՎՐԱՅ ԵՆ: